

Ք Ն Զ Ն Ե Գ Ո Ի Թ Թ Ի Ն

Բ

Պուսսային հետ, Լաօ-Յէին, չինաստանցի Կոմկուկիտսին
Հետ օրէնքներ յօրինեցի, Բարոզեցինք մենք միասին:

Սովրասին հետ զըրպարտեցայ, զըրպարտեցի զայն անտարբեր,
Թէ՛ մասուցի քէ՛ խըմեցի քոյնի բաժակը մահաբեր:

Նագովընցի Յիսուսին հետ քափառեցայ, Բարոզեցի,
Անոր հետ քէ՛ խաչ բարձրացայ, քէ՛ զԱյն խաչին բեւեռեցի:

Արաբական անապատի մարգարէին հետ տեսաւար,
Ես Ալլանին պատգամները տարածեցի բարձրաբարբառ:

Դ

Սարոյկներու վրայ ելեր եմ, ողջակիզուեր հազար անգամ,
Հազար անգամ զենուեր եմ ես, եղբ եմ ես արիւնաբաժ:

Մոխիրներէն ծլեր նորէն, վերնձիւղեր իբրեւ կընիւն,
Վերադարձեր կեանքին կըրկին, աւանդական որպէս քրոջուն:

Տառապանքի ծովէն անցեր ու վերջապէս հասեր եմ հոս,
Մերք ունեցեր Հաւասքը դեկ ու Տեսիլքը ինծի փառոս,

Մերք խաւարին մէջ անսահման ուզեր եմ ա՛լ վերջ տալ կեանքին,
Մերք աղբուր եմ աստիճան յոյսի շող մը պաղատագին:

Դ

Դուրեանին հետ, բոց «Տրսունջ»ով ես Աստուծոյ սիրտն եմ խոցեր,
Տէրեանին հետ, մեղմ եւ անուշ, հեկեկացեր ու հեծեծեր:

Եղիային հետ, խենթ կարօտով, ես տենչացեր եմ Նիրվանան,
Եւ անոր հետ, պարանէ մը առկախեր եմ կեանքը ունայն:

Հիմա դարձեալ հոս եմ անա ու կը դիտեմ շուրջըս նորէն,
Ու կը նայիմ անցած համբուս անծայրածիր, այս կատարէն:

Կը մրտաձեմ՝ բիր ձեւերուս որոնք առի անցած համբուս
Ու վիճակիս՝ բոցերուն մէջ, ցուրտին՝ մութին՝ ուղեկորոյս:

Կը մրտաձեմ ես ձեւերուն որ դեռ առնեմ պիտի անվերջ,
Մինչեւ հասնիմ օր մը Իրէն բոլոր ձեւերս զրոնեմ Իր մէջ:

(Վ. Երջ)

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ